**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3**
**№ ԲՄԱՊՁԲ-7/14-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 23 -ը մարտի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Աքվատիկ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Գալոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 20.03.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/14-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 38 386 005 (երեսունութ միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար հինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Աքվատիկ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | Գեղարքունիքի մարզ, գ. Ծովազարդ |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 25000131000310 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 08410252 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Կ. ԳԱԼՈՅԱՆ |

**Հավելված N 1**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկան | Չ/մ | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Քանակը | Ընդհանուր գումարը | Ապրանքի մատակարարումը 2020թ. ըստ ամիսների |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ապրիլ |
| | Պահածոյացված բանջարեղեն (Բանջարեղենի ռագու՝ պահածո, մսի, կարտոֆիլի և գազարի ռագու) | կգ | 1 405 | 27 321 | 38 386 005 | 27 321 |
| Ընդհանուր գումարը՝ հինգ) ՀՀ դրամ | | | 38 386 005 (երեսունութ միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար | | | |

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

**Հավելված N 2**

## Վճարման ժամանակացույց

| Հ/հ | Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | CPV-ի կոդը | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Պահածոյացված բանջարեղեն (Բանջարեղենի ռագու՝ պահածո, մսի, կարտոֆիլի և գազարի ռագու) | 15331178/12 | 38386005 | 38386005 | 38386005 | 38386005 | 38386005 | 38386005 | 38386005 | 38386005 | 38386005 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտ պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Աքվատիկ» ՍՊԸ տնօրեն

Կ. ԳԱԼՈՅԱՆ